

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 114/10

Քաղ. Երևան

31 մայիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մայիսի 31-ի նիստում (արձանագրություն N80/2) քննարկեց ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2010թ. մարտի 30-ի դիմումը «SHARM» N6828 համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ՀՀ տարածքում ԱԾՄԴ 29, 30-րդ դասերի ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Դիմումում նշված է, որ Հայաստանի Հանրապետությունում առկա է «SHARM» ապրանքային նշանի N6828 գրանցումը (գրանցման թվական 24.06.2002), որի սեփականատերն է հանդիսանում «Շարմ հոլդինգ» ՍՊԸ-ն: Գրանցված «SHARM» ապրանքային նշանը ներառում է ԱԾՄԴ 29 և 30 դասերի ապրանքները: Հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը, դիմողը խնդրում է ԱԾՄԴ 29-րդ և 30-րդ դասերի ապրանքների համար «SHARM» ապրանքային նշանի գործողությունը վաղաժամկետ դադարեցնել, քանի որ հիշյալ ապրանքային նշանը դիմումին նախորդող 5 տարվա ընթացքում այդ դասի ապրանքների համար ՀՀ տարածում չի օգտագործվել:

ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը 23.04.2010թ. ծանուցել է «Շարմ հոլդինգ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Ընկերությունը իր պատասխան գրության մեջ նշել է հիմնավորված առարկությունները:

Նշված է, որ «Շարմ Հոլդինգ» ՍՊԸ-ն «SHARM» (գրանցման թիվ 6828) ապրանքային նշանի նկատմամբ սեփականության իրավունք է ձեռք բերել ընդամենը 2008 թվականի սեպտեմբերի 12-ին «Մուլտի մեդիա-կենտրոն ԹիՎի» ՓԲԸ-ից՝ համաձայն «08» օգոստոսի 2008 թվականին կնքված ապրանքային նշանի զիջման պայմանագրի, որն էլ գրանցվել է Հայաստանի Հանրապետության Մտավոր սեփականության գործակալության պետական գրանցամատյանների բաժնի 12.09.2008 թվականի թիվ 811 որոշմամբ: Քանի որ «SHARM» ապրանքային նշանի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանել է «Մուլտի մեդիա-կենտրոն ԹիՎի» ՓԲԸ-ին, իսկ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն «Առանց ապրանքային նշանի սեփականատիրոջ թույլտվության ոչ ոք իրավունք չունի օգտագործել Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանը», ուստի ընկերությունը հնարավորություն չի ունեցել օրենքով սահմանված կարգով օգտագործել վերը նշված ապրանքային նշանը դիմումին նախորդող 5 տարվա ընթացքում:

Գրության մեջ նշված է, որ «Շարմ Հոլդինգ» ՍՊԸ-ի գործունեության ուղղությունները բազմազան են, ընկերությունը ուրույն տեղ է հատկացնում քաղցրավենիքի, մասնավորապես՝ ԱՕՄԴ 29 և 30 դասերում նշված որոշ ապրանքների արտադրության կազմակերպմանը: Նշված է, որ «SHARM» (գրանցման թիվ 6828) ապրանքային /սպասարկման/ նշանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելուց անմիջապես հետո ընկերությունը գործնական կապեր է հաստատել «Գրանդ Քենդի» ընկերության հետ և մինչ այսօր բանակցություններ է վարում համապատասխան տեսակների քաղցրավենիքի արտադրության շուրջ: Ներկայումս ընկերությունը աշխատանքներ է տանում տարբեր քաղցրավենիքների և դրանց փաթեթավորման արտաքին տեսքի ձևավորման շուրջ, մշակվում է դրանց գեղարվեստական դիզայնը:

Որպես ամփոփում իր առարկությունների «Շարմ Հոլդինգ» ՍՊԸ խնդրել է, հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 22-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 5-րդ

կետի ա), բ) ենթակետերը, ՀՀ սահմանադրության 2-րդ հոդվածները, մերժել «Նահապետ և կ» ՍՊԸ-ի 30.03.2010 թվականի բողոքը:

Կոլեգիայի քննարկման արդյունքը ներկայացրեց պրն.Ա. Բաբայանը, նա նշեց, որ 2010 թվականի մայիսի 20-ին «Շարմ Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն, որտեղ նշված են ընկերության առարկությունները կապված նշանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու հետ: Պրն.Ա. Բաբայանը նշեց, որ «Մուլտի մեդիա-կենտրոն ԹիՎի» ՓԲԸ-ի հետ 08 օգոստոսի 2008 թվականի ն կնքված ապրանքային նշանի զիջման պայմանագրը կնքելու որոշումը ՀՀ մտավոր սեփականության գործակալության պետական գրանցամատյանում գրանցելուց հետո (12.09.2008թ. N 811) «Շարմ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը որոշակի քայլեր է ձեռնարկել: Սակայն, բերված փաստարկները ընդհանրական են եւ լավ կլինեք, եթե ներկայացվեր մանրամասն տեղեկություններ ներկայացված փաստարկների վերաբերյալ:

Բողոքարկողը նշեց, որ ապրանքային նշանը 5 տարվա ընթացքում չի օգտագործվել «Շարմ Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից: Հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը, ապրանքային նշանը պետք է վաղաժամկետ դադարեցնել, քանի որ նախորդող 5 տարվա ընթացքում այն ընդհանրապես չի օգտագործվել:

Կոլեգիայի անդամ պրն. Ա.Խաչիկյանը փաստեց, որ համաձայն «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն ընդհանրապես չի օգտագործվել կամ օգտագործվել է ոչ ողջամիտ ծավալներով ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ սույն օրենքի 26 հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից:

Նշվեց, որ ճիշտ կլինի ապրանքային նշանը օգտագործելու հնարավոր թվականը համարել սեփականատիրոջ կողմից զիջման պայմանագրի գրանցման թվականը:

Ակնհայտ է, որ այս պարագայում սեփականատերը օրենքով նախատեսված ժամանակահատվածը չի ունեցել այն օգտագործելու համար:

Բողոքարկման խորհուրդը, ընդհանուր քննարկման արդյունքում, հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 80-րդ կետի 2-րդ ենթակետով

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2010թ. մարտի 30-ի դիմումն եւ «SHARM» (գրանցման թիվ 6828) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա.Ազիզյան